

ՍԱՂՄՈՍ 121

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ՝ Իսրայելի պահապանը	Աստված Իրեն փնտրողների օգնականը	Օրհնության պատարագ	ՏԵՐԸ մեր պաշտպանը	Իսրայելի պահապանը
<u>MT ներածություն</u> Աստիճանների երգը				
121:1-4	121:1-2 121:3-4	121:1-2 121:3-4	121:1-2 121:3 121:4-6	121:1-2 121:3-4
121:5-8	121:5-6 121:7-8	121:5-6 121:7-8	121:5-6 121:7-8	121:5-6 121:7-8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 121:1-4</p> <p>¹Աչքերս դեպի լեռներն եմ բարձրացնելու, Որտեղից իմ օգնությունն է գալու: ²Իմ օգնությունը ՏԻՐՈՋԻՑ է, Ով երկինքն ու երկիրը ստեղծեց: ³Նա չի դողացնելու քո ոտքը, Նա, ով պահպանում է քեզ, չի նիրհելու: ⁴Ահա, Իսրայելի Պահապանը ո՛չ ննջելու, Ո՛չ էլ քնով է անցնելու:</p>

121:1-8 Բոլոր ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ ԵՆ: Արտահայտում են շարունակվող, անդադար աստվածային հոգատարություն և պաշտպանություն:

Հավանականություն կա, կախված այն հանգամանքից, թե քանի խոսնակ կա այս Սաղմոսում, որ Սաղմ. 121:3-ում ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ կիրառված են ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով (այսինքն՝ աղոթքի խնդրանքներ, NJB, NET):

121:1 «Աչքերս բարձրացնելու եմ» Սա մի նկարագրություն է, թե ինչպես է անձը նայում ՅԱՀՎԵԻՆ և վստահում Նրան (տես՝ Սաղմ. 123:1, 141:8):

- ❖ **«ղեպի լեռները»**՝ Նկատե՛ք, որ այն ՀՈԳՆԱԿԻ թվով է, որը կարող է նշանակել՝
 1. ստեղծագործություն, տես՝ Սաղմ. 87:1
 2. Մորիա լեռան տաճարը (այսինքն՝ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՄՈՐԻԱ):
 3. գորության, կայունության և երկարակեցության պատկեր
 4. պաշտպանություն (տես՝ Սաղմ. 125:1-2)
 5. եթե MT ներածությունը՝ «աստիճանների երգը» նշանակում է ուխտավորների երգեր Երուսաղեմի ճանապարհին, ապա ուխտավորի համար Հուդայի բլուրները տեսնելը նշանակում էր, որ նրանք մոտ էին Երուսաղեմի տաճարին
 6. հավանաբար այն նշանակում էր *Բահադի* պաշտամունքին հակառակը, որը կատարվում էր բարձր տեղերում (տես՝ 4 Թագ. 23:4-14): Ոմանք նայում էին պտղաբերության աստվածներին, սակայն հավատարիմ հետևորդները նայում էին միայն ՅԱՀՎԵԻՆ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

ՅԱՀՎԵՆ ասոցացվում է մի քանի սարերի հետ՝

1. Մորիա լեռը՝ Ծննդոց 22, հետագայում Սողոմոնի տաճարի վայրը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՐԻԱ:
2. Նաբովթ լեռը, որտեղ ՅԱՀՎԵՆ վերցրեց Մովսեսի կյանքը՝ Խոստացյալ Երկիրը ցույց տալուց հետո:
3. Սինա՝ Քորեբ լեռը, այն վայրը, որտեղ ՅԱՀՎԵՆ օրենքը տվեց Մովսեսին, Ելից 19-20:
4. հյուսիսում գտնվող լեռը (այսինքն՝ Սիոնը), Սաղմ. 48:2, Եսայի 14:13գ

ՀՄԱ-ում աստվածները մշտապես ասոցացվում էին սարերի հետ իրենց՝

1. բարձրության համար
2. վեհության համար
3. մշտնջենավոր լինելու համար
4. պաշտպանության համար

❖ **«Որտեղից իմ օգնությունը կգա»** Սաղմոս 121:2 ակնհայտ է դարձնում, որ օգնությունը ֆիզիկական սարից չէ, այլ ստեղծագործության (տես՝ Սաղմ. 121:2) և ուխտի (տես՝ Սաղմ. 121:4) Աստծուց:

121:2 «ՏԵՐԸ» Սա Իսրայելի Աստծո ուխտի անունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«Ով երկինքն ու երկիրը ստեղծեց»** Սա նկատի ունի այս մոլորակի ֆիզիկական ստեղծագործությունը (տես՝ Սաղմ. 102:25, 115:15, 124:8, 134:3, 146:6): Սա ակնարկ է Ծննդոց 1:

Ուշադրություն դարձրե՛ք ինչպես է նկարագրվում ՅԱՀՎԵՆ՝

1. Արարիչ, Սաղմ. 121:2
2. Պահապան, Սաղմ. 121:3ա, 66:9
 - ա. անհատ, տես՝ Սաղմ. 121:7բ, 8
 - բ. հավաքական, տես՝ Սաղմ. 121:4
3. զգոն դիտորդ, Սաղմ. 121:3բ
4. ստվեր, Սաղմ. 121:5-6 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ)
5. հավերժ պահապան (ԲԱՅԸ, BDB 1036, KB 1581, կիրառվում է Սաղմ. 121:3,4,5,7 /երկու անգամ/, և 8-ում)

121:3 «Նա» Սա հնարավոր է վերաբերում է երկրորդ խոսնակին, ով պատասխանում է հհ . 1-3:

- ❖ **«յի դողացնելու քո ոտքը»** Սա տարածված եբրայական նկարագրություն է, որը
 1. խոսում է աստվածավախ կյանքի մասին որպես մաքուր, ուղիղ, բարձր ճանապարհ՝ արահետ, ուղի է (տես՝ Սաղմ . 139:24):
 2. խոսում է չարիքի մասին որպես Աստծո հստակ նշված ճանապարհից (այսինքն՝ հայտնությունից) շեղվել՝ մոլորվել կամ ճանապարհին գայթակղվել:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

- ❖ **«Նա, ով պահպանում է քեզ»** Այս Սաղմոսը առանձնահատուկ է այս արմատի գործածությամբ՝ «պահել» (BDB 1036, KB 1581):
 1. հ.3 – *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
 2. հ. 4 – *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
 3. հ. 5 – *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
 4. հ. 7 – *Qal* ԱՆԿԱՏԱՐ
 5. հ. 7 – *Qal* ԱՆԿԱՏԱՐ
 6. հ. 8 – *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Իսրայելի Աստծո ուխտը հսկում և պահպանում է Իր ժողովրդին:

- ❖ **«յի նիրհելու»** Աստված մշտապես հսկում է՝
 1. Նրա ստեղծագործությունը
 2. Նրա ժողովուրդը

Ի տարբերություն *Fusharhi*, որը քնում է, տես՝ 3 Թագ . 18:27, Եզեկ . 6:13, 18:6, 12, 15: Հնարավոր է «նիրհել» բառը ՅԱՀՎԵԻ ոչ ակտիվ լինելու համար նկարագրություն է (տես՝ Սաղմ . 7:6, 44:23, 73:20, 78:65): Սակայն այս ժամանակներում Նա գործում էր Իր ժողովրդի համար:

Սաղմոս 121:4 կրկնում է այս նույն ճշմարտությունը հավաքական իմաստով: Աստված Իսրայելի համար ծրագիր ունի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ . ՍԱՂՄՈՍ 121:5-8

⁵ՏԵՐԸ քո պահպանն է,
ՏԵՐԸ քո հովանին է՝ քո աջ կողմում:
⁶Ցերեկը արևը քեզ չի հարվածելու,
Ո՛չ էլ գիշերը՝ լուսինը:
⁷ՏԵՐԸ քեզ պահպանելու է ամեն չարիքից,
Պահպանելու է քո անձը:
⁸ՏԵՐԸ պահպանելու է քո ելումուտը այսուհետև՝
Մինչև հավիտյան:

121:5 Հավանական է, որ այս պարբերությունը ներկայացնում է մեկ այլ խոսնակ:

121:6 Սա նկարագրում է՝

1. ռազմական հարձակում
2. դիվական հարձակում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԴԻՎԱԿԱՆ ՀԿ-ՈՒՄ)

Ուշադրություն դարձրեք «պաշտպանել, պահել բոլոր տեսակի չարիքից» արտահայտությունը Սաղմ . 121:7ա-ում: Անշուշտ հնարավոր է, որ այս արտահայտությունը եբրայական դարձվածք է բոլոր խնդիրների համար:

121:7 «Նա քեզ պահպանելու է ամեն չարիքից» Ինչպիսի հրաշալի խոստում է անհատական հոգածության և պաշտպանության: Նա հավատարիմ հետևորդների «հետ» և «համար» է: Մենք մենակ չենք և մեր կյանքը նպատակ ունի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

121:8 Սա Աստծո կողմից Իր բոլոր հավատարիմ հետևորդների կյանքի համար պահպան հոգածության նկարագրություն է (տես՝ 2 Օրինաց 28:6, Սաղմ . 139:1-6):

Ուշադրություն դարձրեք երկու հակահիշների երբայական այս տիպիկ գործածության կերպը, որով ներառվում են բոլորը՝

1. երկինքն ու երկիրը, Սաղմ . 121:2
2. արևն ու լուսինը, Սաղմ . 121:6
3. ելումուտը, Սաղմ . 121:8

121:8ա «քո ելումուտը» Այս նկարագրությունը ամենօրյա կյանքի համար է (տես՝ Թվոց 27:17, 2 Օրինաց 31:2, 4 Թագ . 11:8, նաև նկատե՛ք՝ Սաղմ . 139:2-3):

121:8բ Անշուշտ այս համարում առկա է հավիտենության գործոն, ինչպես որ Սաղմ . 23:6-ում է: ՀԿ-ում հանդերձյալ կյանքը քողարկված է, սակայն ՆԿ-ի պրոգրեսիվ հայտնությունը հստակեցնում է ճշմարտությունը:

❖ «**հավիտյան**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ սար կամ սարեր նկատի ունի Սաղմ . 121:1-ը:
2. Ինչո՞ւ է Աստված որպես արարիչ նշվում այս Սաղմոսում:
3. Բացատրե՛ք Սաղմ . 121:3ա-ի ՀԿ-յան նկարագրությունը:
4. Ինչո՞ւ է Իսրայելը ներկայացվում այս Սաղմոսում՝ 121:4-ում: Ինչպե՞ս է պաշտպանության և հոգածության հավաքական ասպեկտը գործադրվում:
5. Բացատրե՛ք Սաղմ . 121:5բ-ում «հովանու» նկարագրությունը:
6. Ի՞նչ նկատի ունի Սաղմ . 121:7-ի «ամեն չարիք» խոսքը:
7. Կա՞ր արդյոք Սաղմ . 121:8բ-ում հղում հանդերձյալ կյանքի մասին: